ինչպէս նաև երեսփոխանները և վերատեսուչներ։ Կայ աղքատանոց մը, ուր կ'բնակին 70—100 աղքատ Հայեր խառն դասակարգէ։ Ասոնց ծախքը Ս. Նազարէթ եկեղեցին կ'հոգայ և կվերադառնան եկեղեցւոյ ծանքով իրենց հայրենիքը։ Եկեղեցին ամէն տարի կբաժանէ աղքատներուն՝ իրենց տեղերը ղրկելու համար 4—5000 ռուբլի (մէկ ռուբլին 1 շիլլին 4 բէնս) ճանապարհածախս։ Վաղեմի սովորութեան համեմատ, Տեառընդառաջի երեկոյին եկեղեցւոյ մէջ մոմեր կուտան և 1 ռուբլի կստանան աղքատաց համար։

Աբգար և Ընկ. առևտրական Տունն ունի 4—5000 թոնոնոց շոգենաւներ, որ կերթևեկեն Սինկաբուր, Հոնկ—Քոնկ, Նանկայ, Եոքոհամա և Ճաբոն։ Ունին նաև գործատուն, ուր կշինեն պարկեր բրինձի, ցորենի և շաքարի. ունին ածուխի հանքեր, բայց բոլոր գործաւորներն օտարական են։ Կան 10 ի չափ մանր վաճառատուներ, 30 հայ փաստաբաններ, 50 գոմիսիոնէր. 20 բժիշկներ, 200 ի չափ հասարակ արհեստաւոր, 10 ճարտարապետ, 50 ի չափ հայթայթիչներ, 1 փայտի վաճառական, 1 կոշկակար, 1 պանդոկապետ, 100 մեքենագործ, 1 պատկերահան։ Հինգի չափ ածուխի հանքեր կան։ Տուներու վարձքերը շատ սուղ են, նոյնպէս ծառաներու, սակայն ուտելիքները շատ առատ և ածան են, հագուստները չափաւոր են, ոչ ածան են, և ոչ սուղ։ Տուներն ունին էլեկտրական լոյս. շէնքերը հոյակապ և հաստատուն, բոլոր փողոցներուն մէջ կան էլեկտրական թրամվէյներ։ Քաղաքն ունի 2 միլիոն ժողովուրդ, մեծամասնութեամբ Հնդիկ։ Քաղաքն ունի համալսարաններ, դպրէժներ, գրատուններ և քաղաքային պարտէզներ։

Հնդկաստանի Հայ դաղթականութեան կեանքէն տեղեկութիւններ շատ քիչ անգամ կհաղորդուին, բայց իբրև ծանօթութիւն ազգին կաւորը մէկ մասին, որ այդ հեռաւորութեան մէջ իր ազգային նկարագիրը պահած է և իր զաւակները կդաստիարակէ Հայու զգացումներով։ Փափաքելի է, որ Կալկաթայի Հայութիւնը կամ Մարդասիրական ճեմարանն ունենայ իր կանոնաւոր պարբերական մէկ թերթը, որ Հնդկահայոց վերաբերեալ ամէն շարժում ժամանակին տեղեկացնէ։ Բիւզանդիոն

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐ.

Ամերիկայի Հայոց երեսփոխանական ժողովի ատենագրութիւնից (տպած) տեղեկանում ենք, որ տարւոյս փե-

տրվարի 22–ին Ամերիկայի Ուէստ Հօպոքն քաղաքում, Ս. Խաչ եկեղեցում գումարուել է Ամերիկայի Հայոց երեսփոխանական ժողովը առաջնորդական տեղապահ Տ. Պողոս վ. Գաֆֆանեանի նախագահութեամբ։ Ժողովին մասնակցել են ութ կենդրոնների կամ ծխական համայնքների ներկայացուցիչներ. հինգ կենդրոն չեն մասնակցել՝ երեքը անկազմակերպ վիճակ ունենալու համար։

Օրակարգն եղել է

1. Վեհ. Հայրապետի կոնդակի ընթերցումն.
2. Գաղութներից եկած տեղեկագրերի և նամակների ընթերցումն.
3. Առաջնորդի ընտրութեան հարց.
4. Անհովիւ թեմերի եկեղեցականների հարց.
5. Ժողովին չմասնակցող թեմերի հարց.
6. Անկազմակերպ գաղութների հարց.
7. Սահմանադրութեան վերաքննման հարց.
8. Կիլիկիայի որբերի մասին խորհրդակցութիւն.
10. Ժողովի որոշումները հրատարակելու հարց.

Վեհ. Հայրապետի կոնդակի կէտերի վերաբերութեամբ որոշումներն են.

Ա. 1903 թուին սահմանադրութիւնը յօրինուած ժամանակ Ամերիկայում եղել են 7 թեմ կամ ծխական համայնք, յետոյ, գաղթականութեան շատանալով աւելացել է և թեմերի թիւը և է այժմ 12.

Բ. տեղական հանգամանքների պատճառով սահմանադրութիւնը լիովին չէ գործադրուել, և թեմերից միայն 7 ը քահանայ ունեն. բացի այս Ֆրեզնոյում կայ մի արքեպիսկոպոս երեք էլ քահանայ.

Գ. Ազգային հինգ վարժարան կայ 276 երկու սեռի աշակերտներով, ծախքը հոգացւում է բացառիկ օժանդակութեամբ։

Դ. Ամերիկայի հայ գաղթականների թիւը բացի հայ բողոքականներից ու հռոմէականներից 13 գաղութների մէջ՝ մօտ 20,450 է։

Ե. Հայ հոգևորականութեան վիճակը անմխիթար է. թուով քիչ են և անկազմակերպ։ Հայերի տնտեսական վիճակը ընդհանրապես բարեկեցիկ է։

2. Առաջնորդ չը լինելու պատճառով, անկարելի է եղել կենդրոնական վարչութիւն կազմել. և որոշուել է խնդրի լուծումն թողնել յետագայ ընդհ. երես. ժողովին։

3. Առաջնորդի ընտրութիւնը յետաձգուել է մի կարգ գաղութների կազմակերպուած չը լինելու պատճառով։

4. Առաջարկուել է անհովիւ վիճակներին հովիւ ընտրել, որին կոչանդակեն ժողովը և Ամերիկայի առաջնորդական տեղապահը։

5. Ժողովը ցաւ է յայտնել այն թեմերի հոգաբարձութիւններին, որոնք հրաւէրը ստանալով հանդերձ չեն մասնակցել ժողովին։

6. Ժողովը առաջարկել է, որ չը կազմակերպուած թեմերը կազմակերպուին և եթէ կարելի է ունենան մեայուն հովիւներ.

7. Սահմանադրութիւնը վերաքննելու հարցը յետաձգուել է մինչև առաջիկայ երեսփոխանական ժողովը։

8. Կիլիկիայի որբերի համար կոչով հրաւիրել գաղութներին, որ ժողովներ սարքեն, դրամ հանգանակեն և ուղարկեն ընտրուած գանձապահ Խաչատուր Այվատեանին պատրիարքարան հասցնելու.

9. Առաջնորդարանի դիւանի ծախքը որոշուեց բաշխել թեմերի վերայ։

10. Որոշուեց ժողովի ատենագրութիւնը տպագրել և հրատարակել, յանձնարարելով գաղութների հոգաբարձութիւններին ու յանձնախմբերին գործադրել բոլոր որոշումները, որոնք վերաբերում են իրանց եկեղեցու գործերին։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Լրագրերը հաղորդում են, որ Հռովմայ Պապը Վենետիկի Մխիթարեան ուխտի նորընտիր աբբայ Գովրիկեանին շնորհել է արքեպիսկոպոսութեան տիտղոս։